ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-18/1-1-ՔԻՄ/4

N 11/173-2018

Գ-2

ք. Երևան «27» «04» 2018 թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«ՀԱԱԾ
Մուտք N 86
«27» 04 2018 թ.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդհատել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 087 700,00 (երկու միլիոն ութսունյոթ հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար ցուցակ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ ք.Երևան, Նալբանդյան104 ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն Հ/հ 900011301075 ՀՎՀՀ 01507079	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/հ 1930000521940100 ՀՎՀՀ 00433863
Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան	Տնօրեն Ե. Սարգսյան

Հավելված N 1
2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
«27» 04
11/1173-2018

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
գնումների գործընթացում ընտրված մասնակցի կողմից առաջարկվող	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը՝ ըստ աղյուսակ N1-ի	մատակարարման		
									հասցեն	ընդհանուր քանակը՝ ըստ աղյուսակ N1-ի	ժամկետը **
13	33111140/1	Ֆլյուրո ժապավեն 70x30.5	ԱՄՆ, Carestream	Ֆլյուրո ժապավեն Ֆորմատ: 70x30.5 Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով: Պահել չոր տեղում:	հատ	42000,00	84000	2	Ք. Երևան, Ամիրյան 23	2	2018թ-ի հունիսի 30-ը՝
55	33411110/1	Լայֆ ՍԹԴ	Իսպանիա, Kerr	Ատամնաբուժական նյութ Լայֆ ՍԹԴ կամ համարժեք 24 գ, հիդրո կալցիի հիմքի վրա պատրաստված ռենտգենաթափանց կոշտ նյութ, որը նախատեսված է կուպտիայի ծածկման համար, ինչպես նաև որպես տակդիր-ցեմենտ բոլոր տեսակի պլոմբանյութերի համար, աշխատանքային 23C 50% խոնավության դեպքում 6 րոպե վերջնական քարացման համար, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	8800,00	26400	3	Ք. Երևան, Ամիրյան 23	3	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
56	33411120/1	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	Իսպանիա, Kerr	Ատամնաբուժական պլոմբանյութ Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ կամ համարժեք , 26 գրամ պարունակությամբ, EA2, EA3, EA3.5, EB2, T1 գույներով, ինչպես նաև բոնդ 5մլ, օրթոֆոսֆորական թթու 2x3գ, ոչ օրգանական համդրիչները միջինում կազմում են 0,4մկմ, բոլոր գույները հանդիսանում են ոչ ռենտգենաթափանց, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	79000,00	79000	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

57	33411130/1	Փրեմիս սիրինջ	Իտալիա, Kerr	Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը՝ 1.4-1.6%, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	39800,00	**79600**	2	Ք. Երևան, Ամիրյան 23	2	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
58	33411160/1	Օփթի բոնդ սոլո պլյուս 5մլ	Գերմանիա, Coltene Whaledent	Օփթի բոնդ սոլո պլուս 5մլ կամ համարժեք :Ատամնաբուժական տսինձ-նյութ 5 մլ շշով, էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով, եվրոպական կամ համարժեք արտադրության Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով: Սվիսռեք բոնդ	տուփ	8200,00	**8200**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
59	33411170/3	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	Գերմանիա, 3M	Ֆիլթեկ ուլտիմեյթ 48գ կամ համարժեք :Ատամնաբուժական նանոհիբրիդ պլոմբանյութ 48գ, որը իր մեջ պարունակում է գույներ DA2, DA3, DB3, Body A2, A3, A3.5,B2, EA1, EA3, EW, ինչպես նաև AT, կոմպլեկտն իր մեջ պարունակում է նաև սկավառակ, որ ցույց է տալիս, թե յուրաքանչյուր գույնը որ գույների հետ կարելի է համադրել, եզակի պլոմպանյութ է, քանի որ պարունակում է 4 տարբեր տեսակիշերտեր, նանոկրիստալների չափերը 0.6-20մկմ է, ոչ օրգանական խտանյութի պարունակությունը 72.5% է, քաշը 55.6%-ը, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	220000,00	**220000**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
60	33411180/1	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	Իտալիա, Kerr	Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը, այն իր մեջ պարունակում է EA2, EA3, EA3.5 EB2, DA2, DA3, DA3.5 TC,	տուփ	155000,00	**155000**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

				ինչպես նաև Օփթի բոնդ պրայմեր 5մլ և Օփթիբոնդ ադհեսիվ 5մլ, հրման սկավառակների կոմպլեկտ, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:							
61	33411190/1	Արտիստ սիր կիտ N36AKA	Իտալիա, Kerr	Արտիստ սիր կիտ N36AKA կամ համարժեքը Ատամնաբուժությունում օգտագործվող պլոմբանյութ, եվրոպական կամ համարժեք արտադրության: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով: Հերկրպայթ գեներալ կիթ	տուփ	185000,00	**185000**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
62	33411200/1	Վենուս բեյսիք կիթ	Իտալիա, Kerr	Վենուս բեյսիք կիթ 24 գ կամ համարժեք նանոհիբրիդ պլոմբանյութ նախատեսված ատամների վերականգնման համար, հավաքածուն ունի 3 տեսակի եզրեր՝ էմալային, դենտինային և կտրիչ եզր, որը հնարավորություն է այն օգտագործել բազմաբնույթ հնարավորություններով, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):: Ֆիրմային նշումով: Հերկրպայթ ուլտրա ինթրո կիթ	տուփ	130000,00	**130000**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
63	33411210/1	Փաստե ֆիլերս	Չինաստան, NIC	Արմատախողովակները լիցքանյութով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ. Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով	տուփ	1200,00	**72000**	60	Ք. Երևան, Ամիրյան 23	60	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
64	33411220/1	Զետապլուս L ինթրո կիթ- C-սիլիկոն	Իտալիա, Zhermack	Զետապլուս L ինթրո կիթ- C- սիլիկոն կամ համարժեքը , այն ներառում է Զետապլուս 900մլ առաջին շերտ,Օարանվաշ L 140մլ երկրորդ շերտ, 60մլ ակտիվատոր, խառնելու ժամանակը 30վրկ, մշակման ժամանակ 1,15րոպե, դեֆորմացիան 2-5%, վերականգնելիությունը 98%, առաջին շերտի գույնը կանաչ, երկրորդ շերտի գույնը նարնջագույն, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով:	տուփ	12900,00	**12900**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
65	33411230/1	Զետապլուս L կիթ C- սիլիկոն	Իտալիա, Zhermack	Զետապլուս L կիթ C- սիլիկոն կամ համարժեքը , այն ներառում է Զետապլուս 200մլ առաջին շերտ,Օարանվաշ L 40մլ երկրորդ	տուփ	6600,00	**6600**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

				շերտ, 60մլ ակտիվատոր, խառնելու ժամանակը 30վրկ, մշակման ժամանակ 1,15րոպե, դեֆորմացիան 2-5%, վերակականգնելիությունը 98%, առաջին շերտի գույնը կանաչ, երկրորդ շերտի գույնը նարնջագույն, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:							
66	33411240/1	Զետապլուս ՎԼ ինթրո կիթ C-սիլիկոն	Իտալիա, Zhermack	Զետապլուս ՎԼ ինթրո կիթ C-սիլիկոն կամ համարժեքը , այն ներառում է Զետապլուս Սոֆտ 900մլ առաջին շերտ,Օարանվաշ ՎԼ, 140մլ երկրորդ շերտ, 60մլ ակտիվատոր, խառնելու ժամանակը 30վրկ, մշակման ժամանակ 1,15րոպե, դեֆորմացիան 2-5%, վերակականգնելիությունը 98%, առաջին շերտի գույնը դեղին, երկրորդ շերտի գույնը կապույտ, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	12900,00	**12900**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
67	33411250/1	Սուփսթեք ցե-սիլ ունիվերսալ ակտ	Շվեյցարիա, Coltene Whaledent	Սուփսթեք ցե-սիլ ունիվերսալ ակտ 60մլ կամ համարժեք, նախատեսված է օգտագործելու ցանկացած տիպի Տ դասի չափսանյութերի ակտիվացման համար , եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	7998,00	**7998**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
68	33411260/1	Սուփսթեք ցե-սիլ փութթի	Շվեյցարիա, Coltene Whaledent	Սուփսթեք ցե-սիլ փութթի 910մլ կամ համարժեք, այն իր մեջ ներառում է ինչպես Տ դասի այնպես էլ Ա դասի չափսանյութերի բոլոր առավելությունները, պահում է իր ստաբիլությունը նույնիսկ 7 օր հետո, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	10998,00	**10998**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
70	33411280/1	Օփթոսիլ քոմֆորթ կոմպլեկտ	Իտալիա, Zhermack	Օփթոսիլ քոմֆորթ կոմպլեկտ կամ համարժեքը Ատամնաբուժական չափսանյութ օփթոսիլ 900մլ առաջին շերտով, 140 մլ և 60մլ ունիվերսալ ակտիվատորով, այն իր մեջ ներառում է ինչպես Տ դասի այնպես էլ Ա դասի չափսանյութերի բոլոր առավելությունները, պահում է իր ստաբիլությունը նույնիսկ 7 օր հետո, եվրոպական կամ համարժեք	տուփ	14304,00	**14304**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

				արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով: Հետապյուս							
73	33411340/1	Գութա փերչա սպայդս	Վիետնամ, Pearl Dent	Գութա փերչա սպայդս կամ համարժեք Ատամնաբուժական գուտապերչա, արմատները մշտական լիցք անելու համար, 120 հատ տուփի պարունակությամբ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	1090,00	3270	3	Ք. Երևան, Ամիրյան 23	3	2018թ-ի հունիսի 30-ը՝
74	33411350/3	Գութա փերչա մարկեր	Վիետնամ, Pearl Dent	Գութա փերչա մարկեր կամ համարժեք Ատամնաբուժական գուտապերչա գծիկներով գծանշված, արմատները մշտական լիցք անելու համար, 120 հատ տուփի պարունակությամբ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	1090,00	1090	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի հունիսի 30-ը՝
76	33411380/1	Լիզոֆորմին 3000 1000մլ	Գերմանիա, Lysoformin	Լիզոֆորմին 3000 1000մլ կամ համարժեք ախտահանիչ հեղուկ, միջոցը երկնագույն, թափանցիկ, թույլ հոտով խտանյութ է, որպես ազդող նյութ միջոցի կազմի մեջ մտնում են գլուտարային ալդեհիտ 9,5%, գլիոքսալ 7.5%, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 9.6% և այլ բաղադրամասեր 6% և այլն, միջոցը հատուկված է բժշկական սարքերի, սարքավորումների ինչպես նաև գործիքների մակերեսային և ընդհանուր ախտահանման համար, լուծույթի աշխատանքային պիտանելության ժամկետը 14 օր է, խտանյութը կախված օգտագործման նպատակից ունի բացման տարբեր չափաբաժիններ, որը նշված է նյութի տեխ. Բնութագրում, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	13200,00	118800	9	Ք. Երևան, Ամիրյան 23	9	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
77	33411400/1	Ֆայլեր	Չինաստան, NIC	Արմատախոզովակների յայնացման գործիքներ տուփի մեջ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	հատ	160,00	13440	84	Ք. Երևան, Ամիրյան 23	84	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
78	33411410/1	Էնդոմետազոն + Էվգենոլ	Նիգերիա, PD	Էնդոմետազոն + Էվգենոլ կամ համարժեքը Ատամնաբուժական ռետրոգենաթափանց լիցքանյութ Էնդոմետազոն +Էվգենոլ 15գ	տուփ	15200,00	91200	6	Ք. Երևան, Ամիրյան 23	6	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

				փոշի+15մլ հեղուկ էվգենոլ դեքսամետազոնի հիմքի վրա, փոշին պարունակում է 22.5 իմոլա յոդին, 2.2կիսակսիմետալին, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով: Էնդոֆիլ+էվգենոլ							
79	33411420/1	Կանալոցիչներ N4	Չինաստան, NIC	Արմատախողովակները լիցքաթափով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ , Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	1200,00	**60000**	50	Ք. Երևան, Ամիրյան 23	50	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
80	33411430/1	Կ-ֆայլ 15-40 N6	Չինաստան, NIC	Արմատախողովակների լայնացման գործիքներ Կ ֆայլ 6 հատ տուփի մեջ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով	տուփ	960,00	**19200**	20	Ք. Երևան, Ամիրյան 23	20	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
81	33411450/1	Հեմոստատիկ 30մլ	Բելգիա, PD	Հեմոստատիկ 30մլ կամ համարժեք արյունը կանգնեցնող, ցավազրկող հեղուկ, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	հատ	8800,00	**26400**	3	Ք. Երևան, Ամիրյան 23	3	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
82	33411460/1	Կետակ ցեմենտ	Գերմանիա, 3M	Կետակ ցեմենտ 33գ փոշի , հեղուկ 12մլ և աքսեսուարներ կամ համարժեք ատամնաբուժական ցեմենտ աշխատանքային ժամանակը՝1 րոպե խառնել, 3.3 րոպե աշխատանքային ժամանակ, 7 րոպե վերջնական չորացման ժամանակ, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	17350,00	**69400**	4	Ք. Երևան, Ամիրյան 23	4	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
83	33411470/3	Պրեմիս	Իսպանիա, Kerr	Ատամնաբուժական պլոմբանյութ պրեմիս կամ համարժեքը, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը՝1.4 – 1.6%, այն իր մեջ պարունակում է EA, EA3, DA2, ինչպես նաև Օփթի բոնդ սոլո պլուս 5մլ, որն էլ իր մեջ պարունակում է 15% լցանյութ , որը տալիս է 0.4 միկրոն բարձրային ապակի, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին	տուփ	39800,00	**79600**	2	Ք. Երևան, Ամիրյան 23	2	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

				պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:							
84	33411480/1	Վերտիս ֆլոու	Իսպանիա, Kerr	Վերտիս ֆլոու կամ համարժեք հեղուկ պլոմբանյութ 2գ պարունակությամբ, օգտագործման ժամանակ չի պահանջվում ոչ ադգեզիա, ոչ էլ թթվի օգտագործում, այդ ամենը այն պարունակում է 1 կոմպոնենտում, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով:	տուփ	15000,00	30000	2	Ք. Երևան, Ամիրյան 23	2	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
85	33411500/1	Դեսիդենտ	Գերմանիա, Lysoformin	Դեսիդենտ 700մլ կամ համարժեք մակերեսների ախտահանման հեղուկ, նախատեսված է տուբերկուլոզի, հեպատիտ ցեն և բ-ի, ՁԻԱՀ-ի և մի շարք այլ վիրուսների ոչնչացման համար, շատ հեշտ է օգտագործել, չի փչացնում մակերեսները, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով: Աէրոզեզին	տուփ	8100,00	32400	4	Ք. Երևան, Ամիրյան 23	4	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
86	33411510/1	Մաքցեմ էլիտ	Իսպանիա, Kerr	Մաքցեմ էլիտ երկակի կարծրացման կոմպոզիտային ցեմենտ ՝ 5,0 ներարկիչ թափանցիկ գույնով և 5,0 ստանդարտ խառնիչ,ծայրադիրներ կամ համարժեք, որը նախատեսված է կերամիկական, կոմպոզիտային, մետաղական կոնստրուկցիաների ֆիքսացիայի համար, այն չի պահանջում թթվային մշակում և ադգեզիա, այն պարունակվում է ցեմենտի մեջ, այն նախատեսված է նաև վինիրների ֆիքսացիայի համար, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	26000,00	78000	3	Ք. Երևան, Ամիրյան 23	3	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
87	33411520/1	Ֆյուջի պլյուս	Ճապոնիա, GS	Ֆյուջի պլյուս A3 կամ համարժեք կոմպոզիտային ապակեիոնոմերային ցեմենտ, որն իր մեջ պարունակում է 15գ փոշի, 8գ հեղուկ, ինչպես նաև 7գ կոնդիցիոներ, որն էլ իր հերթին ի տարբերություն այլ ցեմենտների ապահովում է ավելի արագ և ավելի ամուր կպչունություն, , ճապոնական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	45000,00	270000	6	Ք. Երևան, Ամիրյան 23	6	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
88	33411550/1	Դենտալ բիբս	Չինաստան, Hefei Telijie	Ատամնաբուժական գոգնոցներ դենտալ բիբս, որը իրենից	հատ	16,20	16200	1000	Ք. Երևան,	1000	2018թ-ի սեպտեմբերի

				ներկայացնում է 3 շերտ թղթի և 2 շերտ պոլիեթիլի համակցություն, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:					Ամիրյան 23		30-ը՝
90	33411570/1	3M ESPE բոնդ	Գերմանիա, 3M	3M ESPE բոնդ 2 6գ կամ համարժեք, այն համալրված է լրացուցիչ նանոմասնիկների համադրությամբ, որը հնարավորություն է տալիս որպեսզի ադհեսիվը ավելի լավ թափանցվի դենտինային շերտի մեջ, միաժամանակ ապահովելով ի տարբերություն այլ ադհեսիվների հնարավորինս բարակ շերտ, այն աշխատանքային բոլոր փուլերում պահպանում է թափանցիկ գույն, ԱՄՆ արտադրության կամ համարժեք, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	տուփ	27000,00	**27000**	1	Ք. Երևան, Ամիրյան 23	1	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝
91	33141193/3	Ատամնաբուժական սպառման պարագաներ	Չինաստան, Hefei Telijie	Բշժկական գործիքների խիստահանման համար անհատական փաթեթներ,90մմx260մմ չափերի, N200 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:	հատ	18,00	**46800**	2600	Ք. Երևան, Ամիրյան 23	2600	2018թ-ի սեպտեմբերի 30-ը՝

Ծանոթություն

* Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

**մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930000521940100
ՀՎՀՀ 00433863

Տնօրեն

Ե. Սարգսյան

ԱՂՅՈՒՍԱԿ N 1

Իրավերով նախատեսված չափաքաժնի համարը	Ապրանքի		Նախատեսվում է գնել 2018թ.			Ընդամենը
	Անվանումը	Չափման միավորը	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	քանակը
			քանակը	քանակը	քանակը	
1	2	3	4	5	6	7
13	Ֆլյուրո ժապավեն 70x30.5	հատ	2	0	0	2
55	Լայֆ ՍԹԴ	տուփ	0	3	0	3
56	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	տուփ	0	1	0	1
57	Փրեմիս սիրինջ	տուփ	0	2	0	2
58	Օփթի բոնդ սոլո պլյուս 5մլ	տուփ	0	1	0	1
59	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	տուփ	0	1	0	1
60	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	տուփ	0	1	0	1
61	Արտիստ սիր կիտ N36AKA	տուփ	0	1	0	1
62	Վենուս բեյսիք կիթ	տուփ	0	1	0	1
63	Փաստե ֆիլերս	տուփ	0	60	0	60
64	Զետապլյուս L ինթրո կիթ- C- սիլիկոն	տուփ	0	1	0	1
65	Զետապլյուս L կիթ C- սիլիկոն	տուփ	0	1	0	1
66	Զետապլյուս ՎL ինթրո կիթ C- սիլիկոն	տուփ	0	1	0	1
67	Սուիսթեք ցե-սիլ ունիվերսալ ակտ	տուփ	0	1	0	1
68	Սուիսթեք ցե-սիլ փութթի	տուփ	0	1	0	1
70	Օփթոսիլ քոմֆորթ կոմպլեկտ	տուփ	0	1	0	1
73	Գութա փերչա պլայդս	տուփ	3	0	0	3
74	Գութա փերչա մարկեր	տուփ	1	0	0	1
76	Լիզոֆորմին 3000 1000մլ	տուփ	3	6	0	9

77	Ֆայլեր	հատ	0	84	0	84
78	Էնդոմետազոն + էվգենոլ	տուփ	3	3	0	6
79	Կանալոցիչներ N4	տուփ	0	50	0	50
80	K-ֆայլ 15-40 N6	տուփ	0	20	0	20
81	Հեմոստատիկ 30մլ	հատ	0	3	0	3
82	Կետակ ցեմենտ	տուփ	0	4	0	4
83	Պրեմիս	տուփ	0	2	0	2
84	Վերտիս ֆլոու	տուփ	0	2	0	2
85	Դեսիդենտ	տուփ	0	4	0	4
86	Մաքցեմ էլիտ	տուփ	0	3	0	3
87	Ֆյուջի պլյուս	տուփ	0	6	0	6
88	Դենտալ բիբս	հատ	0	1000	0	1000
90	3M ESPE բոնդ	տուփ	0	1	0	1
91	Ատամնաբուժական սպառման պարագաներ	հատ	1000	1600	0	2600

Հավելված N 2
«27» 04 2018թ. կնքված
11/173-2018 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

22 դրամ

Ապրանքի անվանումը ֆոնդային կրպակներում հանձնման համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			Հունվար %	Փետրվար %	Մարտ %	Ապրիլ %	Մայիս %	Հունիս %	Հուլիս %	Օգոստոս %	Սեպտեմբեր %	Ընդամենը %
13	33111140/1	Ֆլյուրո ժապավեն 70x30.5	0	0	84000	84000	84000	84000	84000	84000	84000	84000
55	33411110/1	Լայֆ ՍԹԴ	0	0	0	0	0	26400	26400	26400	26400	26400
56	33411120/1	Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ	0	0	0	0	0	79000	79000	79000	79000	79000
57	33411130/1	Փրեմիս սիրինջ	0	0	0	0	0	79600	79600	79600	79600	79600
58	33411160/1	Օփթի բոնդ սոլո պլյուս 5մլ	0	0	0	0	0	8200	8200	8200	8200	8200
59	33411170/3	Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ	0	0	0	0	0	220000	220000	220000	220000	220000
60	33411180/1	Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ	0	0	0	0	0	155000	155000	155000	155000	155000
61	33411190/1	Արտիստ սիր կիտ N36AKA	0	0	0	0	0	185000	185000	185000	185000	185000
62	33411200/1	Վենուս բեյսիք կիթ	0	0	0	0	0	130000	130000	130000	130000	130000
63	33411210/1	Փաստն ֆիլերս	0	0	0	0	0	72000	72000	72000	72000	72000
64	33411220/1	Զետապլյուս L ինթրո կիթ- C- սիլիկոն	0	0	0	0	0	12900	12900	12900	12900	12900
65	33411230/1	Զետապլյուս L կիթ C- սիլիկոն	0	0	0	0	0	6600	6600	6600	6600	6600
66	33411240/1	Զետապլյուս VL ինթրո կիթ C- սիլիկոն	0	0	0	0	0	12900	12900	12900	12900	12900
67	33411250/1	Սուփեթեք ցե-սիլ ունիվերսալ ակտ	0	0	0	0	0	7998	7998	7998	7998	7998
68	33411260/1	Սուփեթեք ցե-սիլ փութթի	0	0	0	0	0	10998	10998	10998	10998	10998
70	33411280/1	Օփթոսիլ քոմֆորթ կոմպլեկտ	0	0	0	0	0	14304	14304	14304	14304	14304
73	33411340/1	Գութա փերչա սլայդս	0	0	3270	3270	3270	3270	3270	3270	3270	3270
74	33411350/3	Գութա փերչա մարկեր	0	0	1090	1090	1090	1090	1090	1090	1090	1090
76	33411380/1	Լիզոֆորմին 3000 1000մլ	39600	39600	39600	39600	39600	118800	118800	118800	118800	118800
77	33411400/1	Ֆայլեր	0	0	0	0	0	13440	13440	13440	13440	13440
78	33411410/1	Էնդոմետազոն + էվգենոլ	45600	45600	45600	45600	45600	91200	91200	91200	91200	91200

79	33411420/1	Կանալոցիչներ N4	0	0	0	0	0	60000	60000	60000	60000	60000
80	33411430/1	Կ-ֆայլ 15-40 N6	0	0	0	0	0	19200	19200	19200	19200	19200
81	33411450/1	Հեմոստատիկ 30մլ	0	0	0	0	0	26400	26400	26400	26400	26400
82	33411460/1	Կեռակ ցեմենտ	0	0	0	0	0	69400	69400	69400	69400	69400
83	33411470/3	Պրեմիս	0	0	0	0	0	79600	79600	79600	79600	79600
84	33411480/1	Վերտիս ֆլոու	0	0	0	0	0	30000	30000	30000	30000	30000
85	33411500/1	Դեսիդենտ	0	0	0	0	0	32400	32400	32400	32400	32400
86	33411510/1	Մաքցեմ էլիտ	0	0	0	0	0	78000	78000	78000	78000	78000
87	33411520/1	Ֆյուջի պլյուս	0	0	0	0	0	270000	270000	270000	270000	270000
88	33411550/1	Դենտալ բիբս	0	0	0	0	0	16200	16200	16200	16200	16200
90	33411570/1	3M ESPE բոնդ	0	0	0	0	0	27000	27000	27000	27000	27000
91	33141193/3	Ատամնաբուժական սպառման պարագաներ	18000	18000	18000	18000	18000	46800	46800	46800	46800	46800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

***** Իրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:***

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/հ 1930000521940100
ՀՎՀՀ 00433863

Տնօրեն

Ե. Սարգսյան

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն